ԱՇՈՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՄԵԿ ԿՅԱՆՔԻ ԵՐԵՔ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒՄՆԵՐԸ

18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի Կովկասում կատարվող բուռն քաղաքական իրադարձությունների հենքի վրա առանձնանում է վրաց արքա Հերակլ Բ-ի որդի Ալեքսանդրի (1770/1-1844) ինքնատիպ և մասամբ ողբերգական կերպարը: Նախնական կրթությունը ստացել էր կաթոլիկ հայրերի մոտ: Բանիմաց էր, գրագետ, տիրապետում էր լեզուների, ակտիվ մասնակցում երկրի քաղաքական կյանքին, վայելում իշխանական տոհմերի բարյացակամ վերաբերմունքը: Արքայի մահից հետո, արքունական սադրանքների հետևանքով, Ալեքսանդրը կհեռացվի պալատից և ժամանակ անց, իր մի խումբ համախոհների հետ կհեռանա Իրան, որտեղ ստանալով Ֆեթի-Ալի շահի հովանավորությունը, կձեռնարկի պայքար Վրաստանում արքունիքի վերածնավորման և իր վերադարձի համար, անգամ մասնակցելով 1826-1828թթ. ռուս-իրանական պատերազմին: Մակայն 1832թ. Կովկասում հաստատված ռուսական իշխանության դեմ կազմակերպված դավադրության մասնակից վրաց մեծատոհմիկ վերնախավի ձերբակալմամբ վերջնականապես կանէանա Ալեքսանդրի վերադարձի հույսը[1]: Պատմա-քաղաքական այս համառոտ հենքին կմիահյուսվեն նաև պատմա-գեղարվեստական բնույթի վաստեր, որոնց շարքում յուրօրինակ արժեքավորում կստանան վրաց արքայազնի երեք դիմանկարչական աշխատանքները, կատարված Իրանում դեռևս նրա կենդանության օրոք, որոնցից առավել նշանակալիցը կպատկանի արքայազնի մերձավոր, նրա կյանքի դժվարին պահերին նրան սատարող հայ նկարիչ Եսայի Ջանջուդազյանցի վրձնին:

Ալեքսանդր արքայազնի առաջին գեղանկար պատկերումը գտնվում է Թեհրանի Նեգարեսթան պալատի ընդունելության սրահի պատերից մեկի վրա կատարված խմբանկարի մեջ: Այս որմնանկարի ստեղծման վերաբերյալ, հայ իրականության մեջ առաջին հիշատակումը պատկանում է հայ ականավոր գրող Ռաֆֆուն (Հակոբ Մելիք-Հակոբյան), որն այդ մասին հիշատակում է իր «Վրաց իշխան արքայազն Ալեքսանդրի կյանքից Պարսկաստանում» հոդված-հուշագրության մեջ[2]: Հեղինակի հոդվածը արժեքավորվում է և պատմագրական առումով, քանի որ շա-

ղաղրված փաստերը հիմնվում են ականատեսների պատմածների վրա. երբ Ալեքսանդրը բնակվում էր Սալմաստ գավառի Խոսրովա հայաբնակ գյուղում, որը նրան էր նվիրել Ֆեթի-Ալի շահը: Ըստ հեղինակի «Ֆեթի-Ալի շահը սիրում էր իշխան Ալեքսանդրին: Նա շնորհեց նրան Վասիլի Գուրջիսքան (Վրաստանի նահանգապետ-Ա.Ս.) տիտղոսը:...Ֆեթի-Ալի շահը այնքան պատվեց նրան, որ մի անգամ, երբ նա ուներ մեծահանդես Սալամ (ընդունելություն-Ա.Ս.) Նիգարլինսքանի այգու ապարանքում, ընդունեց իշխան Ալեքսանդրին իր ամենաբարձր դրանիկների թվում....: Շահը հրամայեց նույն հանդեսի պատկերը նկարել ապարանքի դահլիճի պատի վրա, որի մեջ առաջին տեղը բռնում է իշխան Ալեքսանդրի պատկերը»: Հեղինակը, տալով մեծանուն վրաց իշխանավորի անվանը, նրա կերպարի վերարտադրությունը նշում է առաջնային: Իրականում այդ պատկերագրումը կատարված է յոթ մեծածավալ կտավներից մեկի վրա, որտեղ շահի մերձավորների և հրավիրված հյուրերի դիմանկարները զետեղված են ըստ զբաղեցրած պաշտոնների հաջորդականության (մոտ 80 կերպար)[3], յուրաքանչյուրի ազգանվան կոչման ու զբաղեցրած պաշտոնի գրությամբ: Ալեքսանդրը պատկերված է Իրանի թագաժառանգ Աբբաս-Միրզայի կողքին, 10-րդ տեղում. «Ալեքսանդր Միրզա Վալի-ե Գուրջեսքան» (Ալեքսանդր Միրզա՝ Վրաստանի նահանգապետ) գրառմամբ, որի կողքին են նաև Երևանի նահանգապետը, մի քանի եվրոպացի հյուրեր ևն: Նկարի կոմպոզիցիոն ողջ հասմակարգը կառուցված է 19-րդ դ. Ղաջարական ոճի առավել տիպական նկարչության սկզբունքների ղեկորատիվ մոտեցումներով, որոնք ծառայում են կերպարների պաշտոնական աստիճանավորումն ընդգծելու համար: Հիշենք, որ Նեգարեսքան պալատի կառուցման և ներքին հարդարման աշխատանքները ղեկավարում էր ժամանակի հայտնի պալատական նկարիչ Աղաջան Էսֆահանին, որին հետագայում կվոխարինի գլխավոր ճարտարապետի և նկարչական արհեստանոցի ղեկավարի պաշտոնը ստանձնած Աբդուլլահ խանը, որի օրոք էլ կստեղծվի այս նկարաշարքը: Հետաքրքրական է նաև այն հանգամանքը, որ նկարիչը ևս պատկերված է արքայազն Ալեքսանդրի հարևանությամբ, Մեծ վեզիր Միրզա Մահմադ Շաֆիհի կողքին (հնարավոր է, որ որմնանկարների ստեղծմանը մասնակից լիներ և ժամանակի հայտնի նկարիչ՝ Ղոլամ-Ալի Մեհրը, որի վրձնին պատկանող Ֆաթհ-Ալի շահի մի քանի դիմանկարները պահպանվում են Թբիլիսիի Վրացական արվեստի թանգարանում[4]):

Ալեքսանդրի հաջորդ դիմանկարը կստեղծվի Թավրիզում, հայազգի նկարիչ Եսայի Ջանջուղազյանցի կողմից, անմիջապես բնորդից: Ջրաներկ այս աշխատանքում Ալեքսանդրը պատկերված է ստրպաթավոր ծառի տակ նստած, գլխահակ, կողքին կանգնած ձիու սանձը ձեռքին: Աշխատանքում նկարիչը ինքնատիպ վարպետությամբ կարողացել է վերարտադրել հոգեկան խռովահույզ վիճակում գտնվող մի մարդու կեր-

պար, որը բախտի ու ճակատագրի քմահաճույքով հայտնվել է օտարության մեջ, անհեռանկար կյանքով, առանց մերձավորների, միայն երևակայական «արքայազնի» տիտղոսով, ապրում է մեծագույն հիասթափություն, բայց և միևնույն ժամանակ ունի կյանքի անկատար մի նպատակ՝ վերաղառնալ հայրենիք:

Նկարի հեղինակի՝ Եսայի Ջանջուղազյանցի անունը դուրս է մնացել հայ արվեստի 19-րդ պատմությունից, չնայած այն հանգամանքին, որ նա զգալի հետք է թողել ինչպես հայ, նույնպես և վրաց արվեստի պատմության մեջ, ստեղծագործելով Թիֆլիսում, որտեղ նա կատարել է տեղի ազնվականների բազմաթիվ դիմանկարներ: Հնարավոր է, որ վրացական արքունիքում գտնվելու ժամանակ նրա և երիտասարդ ու արվեստով

հրապուրվող Ալեքսանդրի միջև ստեղծվել էին բարեկամական հարաբերություններ. որոնք շարունակվեցին նաև Իրանում, երբ Զանջուղազյանցը, դարի 40-ական թթ. կտեղափոխվի Թավրիզ, մնալով արքայազն Ալեքսանդրի կողքին, վերջինիս կյանքի դժվարին օրերին:

Նկարչի առանձնահատուկ և ջերմ վերաբերմունքի մասին է վկայում նույն նկարի ցածում նկարչի ձեռքով գրված քառյակի տողերը՝ հայերեն, վրացերեն և պարսկերեն լեզուներով.

Սա Ալեքսանդրն է, որը թշնամիների վրա սարսափ է տարածում,
Հերակլ երկրորդի որդին, որ առյուծի է նմանվում,

Օր ու գիշեր անխոնջ ցանկությամբ
Քարթլին և Կախեթն է նա փափագում:

Նկարի վրա կա նաև նկարչի կողմից կատարված եռալեզու ինքնագիրը. «Նկարել է ծառան ի հուշ սխրաքակցի, 24 դեկտեմբերի 1840 թիվ: Նկարել է Եսայի Ջանջուղազյանցը»:

Հետագայում հեղինակը նկարը կնվիրի թավրիզաբնակ հայեր Սագինյանների ընտանիքին, որոնց հետ մոտ էր նաև ինքը՝ Ալեքսանդրը: Այս անվանի ընտանիքին մոտ կլինի և հայ մեծանուն Հովնաթանյան նկարչական տոհմի շառավիղ Հակոբ Հովնաթանյանը: Տեղին է նշել, որ արքայազնը մտերիմ էր Թավրիզի և Թեհրանի հայ համայնքի բազմաթիվ ընտանիքների հետ, որը բացատրվում էր մասամբ այն հանգամանքով, որ Ալեքսանդրի առաջին կինը, Երևանի մելիք Սահակ Աղամալյանցի դուստր Մարիամն էր, որից և ուներ որդի՝ Իրակլին: Ֆաթհ-Ալի շահի մահից հետո (1834թ.), արքունական բանսարկությունների պատճառով, զսահին հավակնող նրա հետնորդների կողմից Ալեքսանդրը կշնորհազրկվի և հեռացվելով պալատից կտրվի մոռացության և, ըստ Ռաֆֆու հիշատակման, «....կորցնելով իր իրոքների իրականացման հույսերը, ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ»[5]: 19-րդ դարի 70-ական թթ., Թիֆլիսում հրատարակվող «ԸՍՑՀ, ԸՏՈՐՈՎվՀՀ ԱՈՉՍՈՉԸՍ՝ ՈՐԱՊՏՀ-ՐՈՒՈՒՓԱԸՍ՝ ՍՏՎՈՐԸՈՒ՝» բազմահատորյակի 5-րդ հատորում կզետեղվի արքայազն Ալեքսանդրի դիմանկարը, որի վերաբերյալ, հրատարակիչ Ադոլֆ Բերժեն կնշի, որ այն կատարել է Ջանջուղազով նկարիչը և այն լուսանկարվել է Թավրիզում, սակայն գեղանկարչական առումով թույլ աշխատանք է[6]: Պետք է հստակեցնել, որ տպագրված օրինակում Ալեքսանդրը պատկերված է կոմպոզիցիոն այլ լուծումներով. գոտկատեղից, ճանապարհորդական հագուստով, ձեռքը դաշույնի վրա, հագին հասարակ արխալուղ և փափախ: Կերպարի մոդելավորումները և դեմքի ռեալիստական ու ծավալային նուրբ մշակումները հուշում են 19-րդ դ. Թիֆլիսում տարածված դիմանկարչական արվեստի սկզբունքներով ստեղծագործող, ժամանակի դիմապատկերի ակնառու դեմքերից մեկի՝ Հակոբ Հովնաթանյանի կողմից կատարված որևէ օրինակի ընդօրինակման փաստը: Աշխատանքը շրջերիզված է բուսական զարդանախշով կատարված եզրաշերտով, որի մշակումները մոտ են իրանական մանրանկարչական ոճական առանձնահատկություններին: Հաշվի առնելով արքայազն Ալեքսանդրի նկարի իրական գեղարվեստական մեկնաբանումները, ակնհայտ է, որ այս դիմանկարչական պատկերը մտացածին աշխատանք է, իսկ կերպարի իսկությանը հավաստի դրսևորելու համար, հրատարակիչը օգտագործում է հայ նկարչի անունը: Տպագրված օրինակը անտարակույս եվրոպացի վիմագրի կատարած է և չի կարող լինել Ջանջուղազյանցի աշխատանքի տարբերակ անգամ մտքային հորինվածքի անհամապատասխանությամբ:

Արքայազն Ալեքսանդրը իր նամակներից մեկում կգրի. «Հավատացեք, որ եթե ես լինեմ իմ հայրենի հողում, դա կլինի իմ հանգիստն ու երանությունը, իսկ եթե չլինեմ իմ հայրենիքում, ապա երբեք չեմ ունենա հանգիստ»:

Ալեքսանդրը մահացավ Թեհրանում, 1844թ., 73 տարեկան հասակում՝, որի կապակցությամբ Ռաֆֆին կգրի. «Նորա վերջին կտակը եղավ այն, որ յուր մարմինը տարվի Վրաստան և այդ պատճառով նույս դագաղը երկար, անքաղ դրված էր Թեհրանի Շահ Աբդուլ-Ազիմի դերվազայի հայոց եկեղեցում: Բայց կտակը չկատարվեցավ»[8]: Ալեքսանդրի մտերիմ, հայազգի հասարակական և քաղաքական գործիչ Յաղուբ-խանը (Հակոբ) նույնպես չկարողացավ կատարել Ալեքսանդրի կամքը և նույն եկեղեցու գավթում, Ռաֆֆու վկայությամբ «....դուսն հանդեպ թաղեց իշխանի մարմինը»: Սբ. Բարդուղիմեոս եկեղեցու մուտքի ստոջև այսօր էլ դեռևս նկատելի է վրաց արքայազն Ալեքսանդրի մասամբ հողածածկ և ժամանակին չդիմակայած համեստ շիրմաքարը:

Վրաց արքայազն, հայ բարեկամ, օտարության մեջ լքված կյանք և երեք պատկերագրված հուշ:

ASHOT STEPANYAN

THREE PORTRAITS OF ONE LIFE

At the end of 18th - at the beginning of the 19th centuries in the Georgian royal court should be distinguished the original image of Prince Alexander (1770/1 - 1844), who later will be expelled from the Palace, finding a refuge in Iran along with few adherents, among them - Armenian painter Esayi Janjughazyants, who had supported the Prince in difficult times of his life. The name of E. Janjughazyants remained outside the history of the 19th century Art, in spite of the fact that he left a trace both in the history of Armenian and Georgian Arts, operating in Tiflis and Iran.

Three portraits of Prince Alexander are known, among them a picture made by the Armenian painter, is estimated as the ultimate chord of the tragical life of the Georgian Prince.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասն տես՝ А. Ерицов, Последний потомок Грузинского царского дома, " Весь Кавказ", 1903, т.1.
2. «Մշակ», 1872, # 13, էջ 1: Տես. Ռաֆֆի, Երկ. ժող., Հ. 9, Եր., 1964, էջ 32-36:
3. «Հոնար վա Սարդոմ» (Մշակույթ և ժողովուրդ), 1974, # 144, էջ 31-37 (պարսկ.)
4. Ш. Амиранашвили, Иранская станковая живопись. Тифлис, 1940, с. 30.
5. Ռաֆֆի, նշվ. աշխ., էջ 32:

6. Акты, собранные кавказскою археографическою комиссиею, т. V, Тифлис, 1873, с. VIII.6.
7. Histoire de la Georgie. v. II, p. 637.
8. Բաֆֆի, Նշվ. աշխ., էջ 34: